ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԾԱՂԿԱՁՈՐԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

REPUBLIC OF ARMENIA
KOTAYK MARZ
MUNICIPALITY OF
TSAKHKADZOR

2310 թ. Ծաղկաձոր Օրբելի Եղբ. 9 Tsakhkadzor city Orbeli Br.9
հեռ. +374 60 703000, էլ. հասցե tsaghkadzor.kotayq@mta.gov.am, info@visittsaghkadzor.com

29 օգոստոս 2025թ.

<<Մինասյաններ Շին>> ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ Գ.ՄԻՆԱՍՅԱՆԻՆ
Հասցե՝ Գեղարքունիքի մարզ,գ.Երանոս,4/26
ՀՎՀՀ 08423306
էլ.փոստ՝ minshin.1982@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի ամբողջությամբ լուծելու վերաբերյալ

Հարգելի մասնակից

Ծաղկաձորի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) կարիքների համար *«Ծաղկաձոր համայնքի Մեղրաձոր բնակավայրի խմելու ջրի ջրամատակարարման համակարգի կառուցման աշխատանքներ»-ի* ձեռքբերման նպատակով հայտարարված «ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-24/9» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) հետ 2024թ. նոյեմբերի 01-ին կնքվել է թիվ «ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-24/9» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Ընթացակարգին հայտ ներկայացրած և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից **«ՊՐՈՖ ԲԻԼԴ» ՍՊԸ, «ԱՐՄ ՊԼԱՍ» ՓԲԸ, «ԴՈՐՈԺՆԻԿ Ա» ՍՊԸ համատեղ գործունեության կողմից բողոք է ներկայացվել** Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ գնումների պաշտոնական տեղեկագրում 09.10.2024 թվականին հրապարակած հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության 4-րդ և 7-րդ կետերն անվավեր ճանաչելու մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի թիվ ԵԴ2/9398/02/24 քաղաքացիական գործով 2025թ. հունվարի 03-ին կայացված վճռով (այսուհետ՝ Վճիռ) բավարարվել է հայցադիմումը՝ անվավեր ճանաչելու Պայմանագիրը:

Սույն դատավճիռը մտել է օրինական ուժի մեջ:

Ելնելով վերոգրյալից՝ Ծաղկաձորի համայնքապետարանը,ի կատարումն Վճռի պահանջների, միակողմանի ամբողջությամբ լուծում է «Մինասյաններ Շին» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) հետ 2024թ. նոյեմբերի 01-ին կնքված թիվ «ԾՔ-ՀԲՄԱՇՁԲ-24/9» ծածկագրով Պայմանագիրը:

Քաղաքացիական օրենսգրքի 466 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:»

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները, համաձայն որի՝ պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին.»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատ. Իրավաբանական, քարտուղարության,անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ /բարեվարքության կազմակերպիչ/՝ Ս. Այոյան

+37460680139